


489



1896.

891.542-2
U-66

1710


ԴՕՆԱՌԱԼՈՒՄ ՄՆԱՑ

~~Հայոց պատմություն~~
177



ՎՕԳՐԱԳՐԻ ՄԵԿ ԱՐԱՐՈՒԱԽՈՎ

ՅՈՎԱԿԻՄ ՍՈԼՈՎԵՅՈՒ



ՄՈՍԿՈՒԱ

ՅԱ Ա Ր Ա Ն Ք Բ Ա Ր Ի Ո Ւ Դ Ա Ր Ե Ա Ն Ի Ք

1896

(85)

Արարատյան, Կըստե - 1700

891.542-2

U-66

Արարատյան շախ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՆՈՒԿԱՐԱՐԱ

Եղբայր

Հ Ծագիք

1896 թ.



ՊՈԳՎԱԴՐԱ ՄԻԱ ԱՐԱՐԱՐԱ

Հայոց մայ.



ՑՈՎԱԿԻ ՍՈԼՈՎԵԱՆ

1896

ՄԱՍԿՈՒԱ

ՅԱԿԱՐԱՆ Ք. ԲԱՐԱԿԱՐԱՐԱՆԻ

1896

3864

ԳՈՐԾՈՂ ԱՆՁԻՆՔ

Дозволено Цензурою. С.-Петербургъ, 19 Нояб. 1895 г.

2004



177-2014

№ 176

Типогр. Х. Бархударянъ, Москва, Масниц., д. Ермакова.

ԻՍԱՅ ԵԱԿՈՒԼԻՀԶ ԿԱՐԿԱՏԱՆԵԱՆ, մանրավածառ, 50
տարեկան—Գ. ՄԵԼԻՔԵԱՆ:
ՕԿՍԻՆԱ, ԲՈՂԴԱՆՈՎՆԱ, նրա կինը, 35 տարեկան—
Ա. ՍԵՐԵԲՐԱԿԵԱՆ:
ՄԱՇԱ, Կարկատանեանի աղջիկը, 16 տարեկան—Ե. ՆԱԽ-
ՄԱՆ:
ՍԻԴԵԱՆ:
ԴԱՆՈՒՇ, մատուակ, 50 տարեկան—Ն. ՍՈԲՈԼԵԱՆ:
Գործն անցնում է մի գաւառական քաղա-
քում իսայ Եակուլիչի տանը:

Առաջին անգամ ներկայացրած է Աստրախանում 1894
թ. մարտի 20-ին բարեգործական նպատակով:

Կъ представленію дозволено 8 марта 1894 г. № 1435.

ՂՈՆԱՐԼՈՒՂՄ ՄՆԱՑ.

ՎՕԴՎՎԻԼ ՄԵԿ ԱՐԱՐՈՒԽԾՈՎ.

ԲԵՄԸ ՆԵՐԿԱՅԱԳՆՈՒՄ Է ՀԱՍԱՐԱԿ ՄԵՆՏԵՎ. մէջ տեղում և
երկու կողքում դռներ. աջում (ժողովրդի կողմից) մի հա-
սարակ սեղան. ծախ կողմում՝ աթոռներ, պատից կախած
է մի հնամաշ պատկեր, որի վրա նկարած է, ինչպէս
Աբրահամը զոհում է հսահակին: Երեկոյ է:

ՏԵՍԻԼ Ա.

ԻՍԱՅ ԵԱԿՈՒԼԻՒԶ (մանելով մէջ տեղի զըռ-
նից, յած է դնում զլխարկը և ձեռնա-
փայտը): Ուշի, վերջապէս հասայ... Այ
ձանապարհ, Աստուած փչացնի, գալիս ես,
գալիս՝ վերջ չկայ: (Մօաճնալով սեղանին,
յած դնելով բանալիքը, որ փաթաթած է
մի տոպրակի մէջ, նստում է): Է՛ր կհանք

տեղեց մի բան է առնում: Մինք էլ վատ
 ենք. քանի, քանի անգամ եմ ասել ե-
 կը, խօսք կապենք, մի դնից յած չգանք,
 —չ ու չ, ում ևս ասում—յիմարները
 զեռ վրաս էլ ծիծաղում են: Մանաւանդ
 էն անիծած Վարթաշը, Աստուած ազա-
 տի, բազարաւորները ձեռքից էրված են,
 հենց որ տեսնի մինն եկաւ մօտի, իսկցն
 աչքերը չորս արած, ագռաւի պէս, սպա-
 սում է որ կանչի իր խանութը: Համեցէք,
 էպան տանջանքը տար և թիք ու մուր
 լսիր: Տունդ էլ կարդին լինի, էլ ինչ հոգս.
 ամեն իրիկուն զլինիդ մի բան բերում են,
 ամեն օր վայ են տալիս՝ էս չկայ, էն չկայ,
 էն բանն առ, էն բանը բեր, հասած աղ-
 ջիկ ունիս, պէտք կզայ — որ մինը ասեմ,
 չասած աղջիկ ունենալն էլ մի կրակ...
 էշ, մի խօսքով չարչարվեր ու չարչարվեր:
 Այ, հիմա էլ կես ժամ է, որ եկել եմ,
 մարդ չկայ, տեսնես որ ծակն են մոել...
 Մաշա, Մաշա...

է էլե. տանջվեր, հա՛ տանջվեր՝ առաւօտը
 վեր կաց շուտով, շտապ թէյ խմիր, և,
 վլուխտ ճղած, վաղեր դուքան, ի՞նչ է մի
 երկու շահի պէտք է փող աշխատենք: Բա-
 ներն էլ խօ՛ հիմա Աստծուն է յայտնի:
 Այ, հինգ էսօր առաւօտից մինչև իրիկուն
 ուս եմ եղել գուէք մի ասէք թէ ի՞նչ եմ
 արել, ի՞նչ եմ աշխատել — մուտք է եղել
 10 մանէթ 21 կոպէկ: Հիմա համեցէք էդ
 փողի աշխատանքով դուքանի քրեշ առւը
 և տուն պահիր: Էշ, որտեղ են հին տա-
 րիները. ողօրմած հոգի հայրս պատմում
 էր՝ մեծ խօլերի տարին ի՞նչ էժան դու-
 քաններ էին տալիս... Հերուն ինչ եմ զը-
 նում, շատ տարվայ բան չ իմ աչքի տե-
 սածը՝ 20 տարվայ բան կլինի՝ էս դուքանը,
 որ հիմա ձեռքիս է, արժէր տարէնը 50
 մանէթ, բայց էսօրուան օրը տալիս եմ
 200 արծաթ: Էշ, հէ... (Հառաջում է)
 փող աշխատելու տարիները հին տարի-
 ներն էին — հիմա ջուրը ջրից հանես, երկու
 ձեռքով փառք տուր: Երանի, մուշտա-
 րին որ գալիս էր, ապրանքը շաքարի պէս
 էինք ծախում բայց հիմա՝ տասը տեղ
 մանում է, դուրս է գալիս, ապա թէ մի

ՏԵՍԻԼ Բ.

ԻՍԱՅ ԵԱԿՈՒԼԻՉ ԵՒ ՄԱՇԱ.

ՄԱՇԱ. (Նազով ներս է մանում ձախ կաղմից)։

Ի՞նչ է, հայրիկ։

ԻՍԱՅ. Ուտեղ էք, երկու ժամ է որ եկել եմ,
մարդ չկայ։

ՄԱՇԱ. Ես ձեր գալը տեսայ, հայրիկ. Ի՞նչ էք
ասում։

ԻՍԱՅ. Մայրիկդ որտեղ է։

ՄԱՇԱ. Նա հենց հիմա կզայ, գնացել է Լի-
զայենց...

ԻՍԱՅ (ընդհատելով). Լիզայենց. այ, ջուր
կծեծեն չա...

ՄԱՇԱ. Ոչ, հայրիկ, — Լիզան նոր կապայ է կա-
րել մայրիկին կանչեց, որ ցըյց տայ։

ԻՍԱՅ. Համեցէք, սասացէք։ Բայց այդ քանի ժա-
մանակ ես տառը կապայ կաեսնէի։

ՄԱՇԱ. Պէտք է ուրիշ բանի վրա ել խօսէր...

ԻՍԱՅ. Իմանում եմ, իմանում... էն որ Լիզան
է, բան կգտնի խօսելու։

ՄԱՇԱ. Սա հարկաւոր բան է, հայրիկ։

ԻՍԱՅ (զարմացած). Հարկաւոր. ի՞նչ բան է։

ՄԱՇԱ. Այս շաբաթ մայրիկը ուզում է նորա-
հարսներ կանչել գնաց որ այդ մասին խոր-
հուրդ անէ...

ԻՍԱՅ. Հա, ես եր պակաս։ Զէ, քանի վաղօրօք
է, պէտք է ես ես բակից դուրս գամ, թէ
չ ես Լիզան շաւառվ իմ տունս տակն ու
վրա կանի։

ՄԱՇԱ. Այսօր նա մուրաբայ էլ և եփել մայ-
րիկը պէտք է հարցնէ, թէ բալը քանով
է առել...

ԻՍԱՅ. Եգ քանի բան սասացիր՝ կապայ, բալ
նորահարսներ...

ՄԱՇԱ. (վստահ). Այս, հայրիկ — մայրիկը ու-
զում է այս շաբաթ զօնազլուղ անել մու-
րաբաներ չունինք, գնաց որ հարցնէ բալը
քանի է... Ուզում էք, ես գնամ կանչեմ...
(զնում է մէջ տեղի դռնից)։

ՏԵՍԻԼ Գ.

ԻՍԱՅ ԵԱԿՈՒԼԻՉ (մէսակ). Զասացի. Ես չեմ
իմանում։ Փառք Աստուծոյ, 18 տարի է,
որ պսակված եմ, կնկաս էսպէս էլ, էնպէս
էլ եմ Ճանաչում (ձեռքի դաստակի եր-

կու կողմն է ցոյց տալիս). իր խելքից մի
բան չի անիլ մէկը կողքից տրզգի՝ թէ էս
է պէտք, էն է պէտք—վերջացաւ,—իսկոյն
գլուխը ծղած՝ էն բանը կուզի անել: Հիմա
էդ կիզան էլ որ էս տեղ է, գնայ ու զը-
նայ... Էդ անիծածը իմ խելքը կնկան ինչ
պէս ուզում է՝ պատեյնում է, ինչ սա-
զով ուզում է՝ պարայնում է: Հիմա ան-
պատճառ մի նոր բանով կը այ: Քանի
անգամ եմ ասել ձեռ քաշեր էդ յիմար
սովորութիւններից, դա մեր բանը չէ, մենք
չենք կարող հարուստների հետ ոտ ձգել—
ում ես ասում—էս պատին ասես (ցոյց
տալով) իմ կնկան ասես, մի և նոյն է...
(Նմանեցնում է կնոջը): «Ինչպէս կարելի է,
կիզան էդպէս ասաց, թաքուշն էդպէս
խորհուրդ տուաւ»... (մատը ճակատին
տանելով, իւր ձայնով): Զկայ... չկայ... մի
մարդ պէտք է խելք ունենայ, խօսք լսէ,
թէ չէ Ալիք մլրատի նման հակառակելով
բան չի դուրս դալ:

ՏԵՍԻԼ Դ.

ԻՍԱՅ ԵԱԿՈՒԼԻՉ, ՕԿՍԻՆԱ, ԲՈՂՋԱՆՈՎՆԱ, և ԱՆՆԱ.

ՕԿՍԻՆԱ (քեմի ետևից). Սա ինչպէս եկաւ, որ
չտեսաց...

ԻՍԱՅ. Հը՛, դալիս է: (Սկսում է հաշիւները
նայել):

ՕԿՍԻՆԱ (մանելով Մաշայի հետ մէջ տեղի
գոնից). Բարի իրիկուն, իսայ Եակուլիչ:
սա ինչպէս ես եկել որ չեմ տեսել: (Մա-
շան անխօս անցնում է իր սենեակը):
շան անխօս անցնում է իր սենեակը):
ԻՍԱՅ. Էնպէս բանով ես զքաղուած, որ տես-
նես:

ՕԿՍԻՆԱ. Լիզայինց տանն էի. չեմ տեսել անց-
նելու:

ԻՍԱՅ (քիչ վրդովկելով). Դու և կիզան որ
պատահաք, Աստուած աղատի՛... Ա՛յ,
տուած ու առած կլնիք հա...
ՕԿՍԻՆԱ. Ծիծաղեր, հա, ծիծաղեր...

ԻՍԱՅ. Երանի քեզ, որ ոչ խելք ունիս, ոչ
դարս: (Ման է գալիս): Թէ յը պատրաստ
է: Աղջեկը մրտեղ է:

ՕԿՍԻՆԱ. Էլ մի հարցրուր...

ԻՍԱՅ. Էլ գնացել է:

ՕԿՍԻՆԱ. Իրիկվայ զանգը չոված հարցրեց մի
կէս ժամակ և մինչեւ հիմա չեղել: Աս-
տուած իմ արիւն խմող թշնամուս չգցէ
դրանց ձեռքը:

ԻՍՈՅ. (Կողմը). Քոնն էլ նշյապէս (իրան): Գնա՛,
տես, կարելի է որ եկել է, ասիր թէյ պատ-
րաստի:

ՕԿՍԻՆԱ. Մաշա՛, Մաշա՛, տես՝ աղջեկը եկել է,
ինքնահոք դրել է:

ՄԱՆԱ. (բեմի ետևից). Ոչ մայրիկ:

ԻՍՈՅ. Ուրեմն էս իրիկուն թէյ չենք խմելու:

ՕԿՍԻՆԱ. Լա՛ւ, կգայ, կսարքի, ինչ ես շտա-
պում:

ԻՍՈՅ. Իսկ եթէ չգայ...

ՕԿՍԻՆԱ. Ինչպէս անենք — ես խօ չեմ գնալ, չեմ
սարքիլ (մեզմ, քնքշարար): Իսայ եա-
կուլիչ...

ԻՍՈՅ. (ընդհատելով). Հէ, կլի ի՞նչ փարացաւ
ունես: Կապադ խօ տուել ես կարելու:

ՕԿՍԻՆԱ. Էս չէ...

ԻՍՈՅ. Էլի ի՞նչ է, կիզայի հետ աւանվել ես,
առանց էս չէ, մի բան հնարած կլինիք:

ՕԿՍԻՆԱ. Զէ, սա ուրիշ բան է:

ԻՍՈՅ. Ինչ պէտք է լինի, կապայ չէ, շետ-
պա կլինի, շլեապա չէ, մաւոաբայ կլինի...

ՕԿՍԻՆԱ. (ուրախ). Հա՛, հա՛. որտեղից իմացար:
ԻՍՈՅ. Ես չեմ իմանում:

ՕԿՍԻՆԱ. Ճշմարիտ, մուռաբաներս էնպէս են
պրծել, որ ոչ զգալի և ոչ չանգալի ու-
նենք — պէտք է եփենք: Դու լաւ կանես, որ
տուաւոտը շուտով վեր կենաս և գնաս
բազար, լաւ մուռաբացուներ առնես. Հիմա
բալի, կեռատի լաւ ժամանակն է:

ԻՍՈՅ. Զեռ վերառ, ի սէր Աստուծոյ, քո մու-

ռաբայով:

ՕԿՍԻՆԱ. Ինչ ես ասում, իւելքդ վըկդ է, հի-

մա որ չեփենք, երբ ենք եփելու:

ԻՍՈՅ. Չեփես, չի լինիր:

ՕԿՍԻՆԱ. Էլի սկսեցիր խօսել հասած աղջեկդ
տանդ, ասում ես մի եփիր՝ ի՞նչ կարող
ես, իմանաս ինչ կլինի...

ԻՍՈՅ. Դու ասա լինի, էս ժամանակ ես իմա-
նում եմ, որտեղից գտնեմ, — պատրաստը
կտանեմ:

ՕԿՍԻՆԱ. (նեղանալով). Աս ի՞նչ բօշայի բան
է, մուռաբայ եփել չեմ իմանում, որ փող
տամ, բազարից պատրաստը առնեմ: Ծի-
ծաղել եմ, հիմա գլխիս է գալիս: Զէ, ես
բազարից պատրաստի մուռաբայ չեմ առ-
նիլ:

ԻՍՈՅ. Ես էգուց պէտք է մի քիչ հանգստա-
նամ շուտ չեմ կարող վեր կիսալ:

ՕԿՍԻՆԱ. Ես քեզ ասում եմ, որ չի լինիր. Էս
շաբաթ ուղում եմ Ծածինին նորահարս
կանչեմ, մուռաբայ չունեմ:

ԻՍՈՅ. (վեր թռնելով). Ի՞նչ նորահարս, տե-
ղումդ ծանր նստիր:

ՕԿՍԻՆԱ. Ինչ խելքի մարդ ես, երկու տարի
է, որ զօնաղուղ չեմ արել հիմա էլ չորս
նորահարս են հաւաքուել: Էգակս չի կարե-
լի, տեղը գնում ենք, պէտք է կանչենք:

ԻՍՈՅ. (զարմացած). Որտե՞ղ եմ գնում, ինչ
ես դուրս տալիս...

ՕԿՍԻՆԱ. Ինչպէս թէ օրտեղ: Ծածինենց չգնա-
ցի՞, Անեօկը, Մաշօկը, հա՛, ինչպէս է նա՝
Եղուշը, Լիսօկը, Սօնիւշը չկանչեցին: Ողջ
տեղը գնացել ենք, հիմա ինչպէս չասենք:
Ես էլ չիմանալի կղնէի, եթէ նորահարս-
ներ չլինէին: Հարսանիքը մի հոգու տեղ
երեք հոգի ենք գնացել: Էգակս շատ խօ-
սում ես, այսուհետեւ ոչ մի տեղ չեմ գը-
նալ: Էս անգամ կանչեմ՝ տակից դուրս
գամ, պարապս տամ, էլ ոչ մի տեղ ոտ-
ղնելու չեմ:

ԻՍՈՅ. Լաւ, յետոյ կանչես չի լինիր:

ՕԿՍԻՆԱ. Յետոյ Գայիւշը երեխայ կբերի, գու-
չի կարող: ԻՍՈՅ. Հօրս ոաի տակ, ինչքան հոգս:
ՕԿՍԻՆԱ. Քո հոգսը չէ, բայց ես չեմ կարող
չկանչեմ:

ԻՍՈՅ. (անհամեկը). Տէ՛ր Աստուած, ձեռք չի
վեր առնում էլի: (Դուրս է գալիս Մա-
շան գիրքը ձեռին և նստում է):

ՕԿՍԻՆԱ. Լաւ, լաւ, ինչ ես նեղանում, նստիր
մի օրինաւոր կերպով լսիր, թէ ի՞նչ եմ
ասում:

ԻՍՈՅ. Լսել չեմ ուղում:

ՄԱՇԱ. Մայրիկ, նորահարս կկանչէք, ես գուշ-
պայ և մաշիկ չունեմ:

ՕԿՍԻՆԱ. Լաւ, եօլա կկնաս:

ԻՍՈՅ. (նեղացած). Էլի ի՞նչ չունես, մաշիկ նոր
եմ խօ տուել:

ՄԱՇԱ. Այն մաշիկով, հայրիկ, մարդու մէջ
դուրս գալ չեմ կարող:

ԻՍՈՅ. Ինչու չես կարող, Փոխփասանի աղջեկն
ես ինչ է:

ՄԱՇԱ. Նա ձմեռվայ մաշիկ է. հիմա հարկա-
ւոր են ամառվայ, բաց երեսով, թեթև
մաշիկներ:

ԻՍՈՅ. Զեղ շատ բան է պէտք. ես ձեղ եմ
տեսնում, դուք մայր ու աղջեկ ինձ ու-
ղում էք առանց շապիկ թողնեք:

ՏԵՇԻԼ Ե.

ՆՈՅՆՔ ԵՒ ԴԱՆՈՒՅՆ.

ԴԱՆՈՒՅՆ (արբած, բայց աշխատում է իրեն զգաստ պահել շուտ շուտ ձեռը տանում է զլիին, կոկ իւղոտած զլուխը շոյելու համար, երեսում է դռան մէջ քաշքչվելով). Տանն էք, կարելի է...

ԻՍՈՅՑ (տեսնելով Դանուշին, զարմացած և բարկանալով). Դանուշ... ինչի՞ համար:

ՕԿՍԻՆԱ. Ասում եմ ուզում եմ հինգշաբթի օրը նորահարսներ կանչել—չես լսում: Ի՞նչ անեմ:

ԻՍՈՅՑ. Տէր Աստուած, գու ինձ համբերութիւն տաս, նահլաթ չար սատանին... (բարկանալով): Ես ասում եմ, նորահարսներ չեմ կանչել, թող էզ զօնաղլուզգ: (Ակնարկելով Դանուշին). Մրան հենց հիմա գուրս կանեմ:

ԴԱՆՈՒՅՆ (մօտենալով). Հրամայել էիք գալու:

ՕԿՍԻՆԱ. Հա, հա, եկ, եկ...

ԻՍՈՅՑ (կողմը). Զոր ու յաւ, զրոյը տանի երեսի:



17

ԴԱՆՈՒՅՆ. Ես ձեր շները վրէս էնպէս բնկան, որ քիչ մնաց յետ զնամ: Լաւ է որ մի մարդ բակից դուրս եկաւ և քշեց. ողորմի նրա հօրը, թէ չէ բանս բուրդ էր: (Նայում է շորերին). Էղ բրիւկս նոր եմ առել առաջիս հագնելն է, լաւ է որ չեն ձգել:

ԻՍՈՅՑ (գալով սեղանի մօտ). Գալդ էր, գլ-նալդ էր...

ՕԿՍԻՆԱ. Մեր շները չեն կծում, մի՛ վախաց: Մօտ արի... (մօտենում են սեղանին, նըստում են, բայց Դանուշից: Օրիորդը դարձեալ իր գիրքն է կարդում: Իսպ եակուլիչը երեսը շուռ տված հաշիւներն է կուլիչը երեսը շուռ տված հաշիւներն է նայում): Ես շաբաթ ուզում եմ նորահարսներ կանչեմ, կարող ես լաւ կառավարել:

ԴԱՆՈՒՅՆ (ծռմռվելով). Ինչպէս չէ, ցաւդ տանեմ, ամօթ չէ, ո՞ր օրվայ ենք. անցեալ շաբաթ երեք զօնաղլուզ եմ կառավարել՝ Զաղկալ Գրիշենց, Բըշմենց, Սատանայ իսպենց.—էգուց էլ պէտք է կանչեմ Զիգոտերով Պողոսենց համար: Դուք խօ է գուց չէք կանչում:

ՕԿՍԻՆԱ. Ես ուզում եմ հինգշաբթի կանչեմ:

ԴԱՆՈՒԻՆ հինգշաբթի... (մտածում է): Զորեք-
շաբթի՝ հնամելը ուրբաթ՝ նրանց տանը...
հինգշաբթի—կարող եմ:
ՕԿՍԻՆԱ. Դու ասում ես Պօղոսինք զօնաղլուղ
են անում:

ԴԱՆՈՒԻՆ. Հրամելէք, մեծ զօնաղլուղ է, քա-
ռասուն հոգի պէտք է կանչեմ:

ՕԿՍԻՆԱ. Փախլաւայ, նուշով հայ գնում է,
թէ չէ:

ԴԱՆՈՒԻՆ (վսաահ). Ի հարկէ, համ փախլա-
ւայ, համ նուշով հայ:

ՕԿՍԻՆԱ. Մոռաբան քանի՞ տեսակ է:

ԴԱՆՈՒԻՆ. Զորո տեսակ, լաւ մոռաբաներ՝ զօ-
ղալ ժոիշի, լիմօն, բաղրանիք:

ՕԿՍԻՆԱ. (ամուսնուն). Լորում ե'ս...

ԴԱՆՈՒԻՆ. Վերջումն էլ ձուկլադ են տալու:

ՕԿՍԻՆԱ. Սա ի՞նչ է, նո՞ր բան է:

ԴԱՆՈՒԻՆ. Հրամելէք, նոր բան է: Անցեալ ձը-
մեռ Ալէքսեյ Բողբանիչենք նորահարս կան-
չան՝ ձուկլադ կար, էս ձմեռ. Էլ Ասատու-
րենց տանն էլ ձուկլադ էր, — հիմա Պօ-
ղոսինք էլ ուզում են ձուկլադ տալ:

ՕԿՍԻՆԱ. (չհաւատալով). Սուտ ես ասում:

ԴԱՆՈՒԻՆ. Մեղայ Աստծու, սուտ ինչ պէտք է
տահմ ամօթ չէ, զլուխս վկայ, ինքս եմ
աղաթ արել, չեմ իմանում:

ՕԿՍԻՆԱ. Յետոյ զօնաղներին էլ դու կանչար:
ԴԱՆՈՒԻՆ. Ի հարկէ ես: Երեսուն տարի է էս
գործը ձեռքիս է, պէտք է չիմանամի
ՄԱՆԱ. Մայրիկ, նա շատ լաւ է կառավարում,
մոռացել էք, կիզայնց տանը ինչպէս լաւ
էր կառավարում:

ԴԱՆՈՒԻՆ (գլուխ տալով). Հրամելէք, Հրա-
մելէք. շատ շնորհակալ եմ:

ՕԿՍԻՆԱ. Ես ուզում եմ հինգշաբթի օրը կան-
չեմ: (Մարդը նեղացած վեր է կենում և
անցնում է իր սենեակը). Ինչպէս ես կար-
ծում, լաւ չէ:

ԴԱՆՈՒԻՆ. Շատ լաւ է, շատ լաւ: Հինգշաբթի
ես էլ կարող եմ:

ՕԿՍԻՆԱ. Յետոյ ինչպէս կկանչես, ի՞նչ կասես:
ԴԱՆՈՒԻՆ. Ինչպէս կհրամայէք. ձեր օրհնեալ

կամքիցն է կախված:

ՕԿՍԻՆԱ. Ես ի՞նչ եմ իմանում, ինչպէս է ըն-
դունված:

ԴԱՆՈՒԻՆ. Կասենք՝ Օկսինա Բօղբանովնան շատ
բարե արաւ, սասաց որ էսօր կէսօրից յե-
տոյ մի թաս չայի համեցէք...*

ՕԿՍԻՆԱ. Զմոռանաս ասել, որ նորահարսներ
ունի, հասկացար:

ԴԱՆՈՒԻՆ. Վայ ինձ համար, ինչպէս չէ:

ՕԿՍԻՆԱ. Պէտք է էնալէս ասես, որ յետ չընկնեն:
ԴԱՆՈՒԾ. Մեղայ Աստծոյ, չեմ իմանում. պուք
հանգիստ եղէք, ողջը շատ լաւ կկառա-
վարեմ:

ՕԿՍԻՆԱ. Բայց դու ողջի տունը ճանաչում ես:
ԴԱՆՈՒԾ. Ճանաչում եմ, ճանաչում:

ՕԿՍԻՆԱ. Մի օրում կհասնես, քառասուն հոգի
կանչես:

ԴԱՆՈՒԾ. Թէկուզ հարուր լինի կկանչեմ:

ՕԿՍԻՆԱ. Դէ, չմոռանաս. կասես՝ կէսօրից յետ
մի թաս չայի, նորահարսներ ունի, հասկա-
ցար, կասես՝ որ յետ չընկնեն:

ԴԱՆՈՒԾ. Բարի է: Հիմա ես գործ չունիմ:

ՕԿՍԻՆԱ. Զէ, հարկաւոր լինի կասեմ: Բայց
թուղթը կպատրաստենք էգուցվան: Մաշա,
էգուցվան կրզիս զօնաղների անունները:

ԴԱՆՈՒԾ. Ինչի՞ համար եք զրում: Հարկաւոր
է, ինձ բերանացի կատեք:

ՕԿՍԻՆԱ. Ինչո՞ւ. թղթով խօ լաւ է:

ԴԱՆՈՒԾ. Հրամելէք, բայց ես դիր չեմ իմա-
նում. դուք միամիտ եղէք. ինձ ձեր աղ-
ջիկը կասի՝ ես միաքս կպահեմ:

ՕԿՍԻՆԱ. (կասկածելով). Կմոռանաս...

ԴԱՆՈՒԾ. Մեղայ Աստծուծոյ, ինչի՞ եմ մուա-
նում, ամօթ չէ, առաջինը խօ չէ...

ՕԿՍԻՆԱ. Հա, լաւ... (Դանուշը ուզում է գը-
նալ): Սպասի՛ր, քանի կառնես, ոչինչ
չասար:

ԴԱՆՈՒԾ. Աւելի չեմ առնիլ:

ՕԿՍԻՆԱ. Էլի՞—զինդ ասա տեսնեմ:

ԴԱՆՈՒԾ. Ամօթ չէ, հերիք է... (ուզումէ գնալ):

ՕԿՍԻՆԱ. Սպասի՛ր, ասա՛, առանց գնի ինչպէս
կլինի:

ԴԱՆՈՒԾ. (զեջանելով). Քանի տուն պէտք է
կանչեմ:

ՕԿՍԻՆԱ. Քառն-կինդ:

ԴԱՆՈՒԾ. Բայց քանի՞ հոգի կլինին:

ՕԿՍԻՆԱ. Շատ չնա՝ քառասուն — կարելի է
երեք-կինդ մարդ աւել լինի՝ կարելի է, որ
եկող էլ չի լինիր:

ԴԱՆՈՒԾ. Էդ ոչինչ (մտածելով). Ի՞նչ առ-
նեմ ձեզանից. Ալէքսէյ Բօղլանիչենցից
առայ 5 մանէթ...

ՕԿՍԻՆԱ. (ընդհատելով). Նրանք հարուստ են.
Նրա զօնաղները շատ եին:

ԴԱՆՈՒԾ. Բայց նորահարսներ չունեին... Լաւ,
ձեզանից էլ կառնեմ 5 մանէթ:

ՕԿՍԻՆԱ. Թանգ չէ:

ԴԱՆՈՒԾ. Տէրը մի արացէ, ամօթ չէ. աւել
չեմ ուզում կարգս վկայ:

ՕԿՍԻՆԱ. Դէ, լաւ, էգուց զլուխ կքաշես, իսկ
թէ առաջ հարկաւոր եղար, կկանչեմ:
ԴԱՆՈՒԻՆ. Բարի է՛: (Դանուշը զլուխ է տալիս
և պատրաստվում է գնալ):

ՕԿՍԻՆԱ. Կարծեմ էդպէս լաւ կլինի. Դա-
նուշ—Հէ՛:
ԴԱՆՈՒԻՆ. Մեղայ Աստծոյ, ինչի պէտք է վատ
լինի. Ես ձեզ համար շատ լաւ կկառավա-
րեմ, այ, կտեմնէք:

ՕԿՍԻՆԱ. Դու շատ ես կառավարել, կիմանաս:
ԴԱՆՈՒԻՆ. Գլխումն էնքան մազ չկայ, որբան
զօնաղլուզ եմ կառավարել: Կհրամայէ՞ք
գնամ:

ՕԿՍԻՆԱ. Հէ՛, բան չկայ էլի: Ասում եմ՝ որ
փողը ծախսում եմ լաւ լինի, ծիծաղի
բան չլինի:

ԴԱՆՈՒԻՆ. Շատ լաւ կլինի... (Դանուշը զլուխ
է տալիս և գնում է):

ՏԵՍԻԼ Զ.

ՕԿՍԻՆԱ ԲՈՂԴԱՆՈՎՆԱ և ՄԱՇԱ.

ՕԿՍԻՆԱ. Էս բանից պրժանէք: Մաշա՛, արի զրի՛,
տեսնենք ումերին ենք կանչում:

ՄԱՇԱ. (գնում է իր սենեակը թուղթ, մատիտ
բերելու):

ՕԿՍԻՆԱ. (մէնակ). Էղ բոլորը եղաւ, բայց բանն
էս է, որ թասեր չունենք. ումից հիմա
ուզենք, չեմ իմանում: Թաքուշն, եթէ ու-
նենայ՝ կտայ, բայց նրանից չեմ ուզում
խնդրել: (Նայելով սենեակի պատերին): Էս
տեղի համար էլ հարկաւոր է պատի եր-
կու լամպ, մի հատ էլ ձեռքի է պէտք.
Իսկ մեր էղ լամպը կդնենք Մաշայի սե-
նեակում: Լիզային պատի լաւ լամպեր ու-
նի, բայց ձեռքի մեծ լամպ չունի... (մատ-
ծում է): Աթոռներս էլ քիչ են: Քառա-
սուն հօգու համար քիչքիչ երեք զիւժին
աթոռ պէտք կդայ՝ բայց մեր աթոռները
զիւժին ու կես են... (Մաշան մանում է
թղթով և մատիտով): Էս բօպէ, Մաշա,
նստած իմանում ես ինչ էի մատծում—
Հդ որ սրանց կանչում ենք՝ ինչի վրայ
ենք նստացնում—աթոռներ չունենք:

ՄԱՇԱ. Լիզայենցից վեր կառնենք, մայրիկ:

ՕԿՍԻՆԱ. Լիզայենցից լամպեր եմ ուզելու:

ՄԱՇԱ. Դէ՛, թաքուշնցից...

ՕԿՍԻՆԱ. Զէ՛, մեռնեմ, թաքուշեց բան չեմ
ուզել ամօթ է. անցեալ շաբաթ դաֆայի

սանդը ուզեցի՝ չտուեց—հիմա գնամ էլի
խնդրեմ երես է հարկաւոր... Ինչ խելքի
մարդ է իսայ Եակուլիքը, տան համար
ոչինչ չի առնում:

ՄԱՆԱԿՈՒՅԱՆ. Այդ անգամ կարելի է կառնի. սպա-
սիր, մայրիկ, ես խնդրեմ:

ՕԿՍԻՆԱ. Լաւ, առենք թէ առաւ: Էլի ուրիշ
պակասութիւններ չունենք:

ՄԱՆԱԿՈՒՅԱՆ. Մայրիկ, ինձ համար նոր կապայ չէք
կարիլ:

ՕԿՍԻՆԱ. Ինչպէս չէ, անպատճառ. բայց սրա
մասին հօրդ մօտ խօսք չբացես. մենք ա-
ղաթի փողերից յետ կզցենք՝ կառնենք:

ՄԱՆԱԿՈՒՅԱՆ. Ինձ համար կապըսոյ զոյնի Փուլեարից
կարէք, ինչպիսին որ կատեան ունի:

ՕԿՍԻՆԱ. Կատեան որ կայ, ու է, նրան կապոյ-
տը սազում է, բայց քեզ չի սազիլ որով-
հետեւ զու ձերմակ ես, քեզ կսազի բաց
կարմիր սիւրան... Լաւ, էդ հիմիկվայ խօ-
սելու բան չէ: Դու այդ թող յետոյ կը-
զրենք, գնա, տե՛ս, հայրիկդ ուր գնաց, ինչ
է անում, կանչե՛ր, որ էդ բանը վերջա-
ցնենք:

ՄԱՆԱԿՈՒՅԱՆ. Նա այն սենեակում նստած լրագիր է
կարգում:

ՕԿՍԻՆԱ. Գնա՛, կանչեր. (Մաշան թուղթը թող-
նում է, գնում է):

ՏԵՍԻԼ Է.

ՕԿՍԻՆԱ ԲՈՂԴԱՆՈՎՆԱ, ՑԵՏՈՅ ԻՍԱՅ ԵԱԿՈՒԼԻԶ.

ՕԿՍԻՆԱ. (մէնտէ). Էս խելքի մարդ է, չի հաս-
կանում... Հասած աղջկան չի տեսնում.
ի՞նչ ուզում եմ առնեմ, յետ զցեմ, հենց
ասում է՝ յետոյ: Էդ քիչ է, խեղճի հա-
մար փող էլ չի տալիս... Անյետաները
Մաթաշը եկել էր լաւ տղայի համար,
եթէ հազար մանեթ տար՝ բանը զլուխ
կգար: Ես եղայ, նա եղաւ, էս պատ կպայ,
էն պատ կպայ՝ 500 աւել չտուաւ ու
չտուաւ... 'Ի զուր տեղան էն զօղալ տղան
ձեռներից բաց ընկաւ, գնաց էն կիսօկենց
չեզոտ բակլային առաւ: Այ, հիմա էլ եր-
կու ոսոր մի մոշեկ է դրել՝ թէ զօնադ-
լուղը յետ զցիր, ինչ է որ յետոյ մնայ...
ԻՍԱՅ (մանելով, խալաթով, թերթը ձեռին, ակ-
նոցները ճակատին բարձրացրած, Մաշան էլ
չետերից է զալիս). Տէ, էլի ինչ ե՞ս ուզում:

ՕԿՍԻՆԱ. Խոայ Ետկուլիչ էղպէս բան չկ լինիր, արի նստիր ասեմ՝ թէ ում եմ կանչում, ի՞նչ պէտք է անենք: Թողել ես, զընացել ես լրագիր ես կարդում, էդ լրագիրը դուքանում չես կարդող կարդաս: Առաւօդից մինչև իրիկուն քեզ չենք տեսնում, տան եղած ժամանակդ էլ չես դալիս, որ խօսենք:

ԻՍՈ.Յ (ակամայից նստելով). Հը, ասա, ի՞նչ ես ասում:

ՕԿՍԻՆԱ. Էդ նորահարսներին որ կանչենք՝ պատի լամպեր չունենք — պէտք է առնես, ողջը մին է, էդ լամպերը յետ ու առաջ պէտք են...

ԻՍՈ.Յ (անհամբերութեամբ). Յետոյ...

ՕԿՍԻՆԱ. (վստահանալով). Յետոյ չեղածից մի դիւժին աթոռ է պէտք: Երկու դիւժին թաս է պէտք:

ԻՍՈ.Յ. Թասեր միթէ չունենք:

ՕԿՍԻՆԱ. Ունենք, բայց զաֆայի չէ:

ԻՍՈ.Յ. Ղաֆայի թասը ո՞րն է — թասը՝ թաս է էլի:

ՕԿՍԻՆԱ. (վըդովված). Ի՞նչ խելքի մարդ ես. էն թասերը որ ունենք, թէյի թասեր են: (Ամուսինը անհամբերութեան նշաններ է

ցցց տալիս). Է՛հ, զլուխ չունեմ. Մաշա, ասա, թէ թէյի թասը ո՞րն է՝ զաֆայինը ո՞լլ...

ՄԱ.Յ. Թէյի թասը, հայրիկ, լինումէ բարձր և բերանն էլ նեղ խսկ զաֆայինը՝ փըռված փորով, բերանն էլ լայն:

ԻՍՈ.Յ. Գրողը տանի ձեղ էլ ձեր թասերն էլ... (սկսում է բարկացած ման գալ):

ՄԱ.Յ. Զէ, հայրիկ, ամօթ է. Եղուշենք ինչ են՝ այնտեղ էլ զաֆայի թասեր ունեն, բայց մենք չունենք:

ՕԿՍԻՆԱ. Դու իմանում ես, ինչպէս լաւ պահող եմ; Կորած խօսքն էդ բաները:

ԻՍՈ.Յ. Զեմ տեսնում..

ՕԿՍԻՆԱ. Ինչ է, սուտ է ինչ է: Դու ասենք զին չես անում, բայց ինձ ով տեսնումէ աշքը վրաս է մնում:

ԻՍՈ.Յ. Ասի՞ր, ասի՞ր:

ՕԿՍԻՆԱ. Ինձ պէս կնիկ ճրագով ման գաս, չես գտնիլ: Դու պէտք է ունենայիր Լիլիւշի պէս կնիկ, որ իր ասածը անել տար, էն ժամանակ կիմանայիր:

ԻՍՈ.Յ. Դու ոչ ոքի չես հաւանիր: Լիլիւշը քեզանից ինչով է պակտա:

ՕԿՍԻՆԱ. Շատ հաց ուտի, որ ինձ հասնի:

ԻՍՈՅ. Լաւ, լաւ, քո ասածն է — ձեռ վեր առ:
 ՕԿՍԻՆԱ. Արի, նստիր, ասեմ ինչ է պէտք:
 ԻՍՈՅ. (Ակամայից նստում է):
 ՕԿՍԻՆԱ. Ամենից առաջ պէտք է տեսնես Վա-
 րեօկին և նրան մի մեծ սինի փախլաւայ
 շինել տաս. նա երկու տեսակ է շինում՝
 3 մանեթ 25 կոպէկանոց և հինգի կէսա-
 նոց: Դու շինել կտաս հինգի կէսանոցը.
 Համկացար:

ԻՍՈՅ. Ի՞նչ խաբար է. 3 մ. 25-ոցը չե՞լինիր:
 ՕԿՍԻՆԱ. Հասկացիր, 3 մ. 25 կ. քառասուն
 զոգուն չե բաւականանալ:
 ՄԱՇԱ. Սյն օրը Եղուշենց տանը, մայրիկ, 3 մ.
 25-ոցն էր:

ՕԿՍԻՆԱ. Թետոյ, 5 ֆունտ նուշ կառնես, լա-
 ւը՝ ֆունտը մինչև 40 կոպ.:

ԻՍՈՅ (նեղացած). 5 ֆունտ նուշ ի՞նչ ես ա-
 նում:

ՕԿՍԻՆԱ. Նուշով հացի համար. նուշով հացը
 տանը կպատրաստենք, էդ ծախսից կը թե-
 թեանատ:

ԻՍՈՅ. Նուշով հաց չդնես, չե լինիր:

ՕԿՍԻՆԱ. (անհամեկը). Էլլ...

ԻՍՈՅ (ընդհատելով). Լաւ, դէ, փախլաւան
 չլինի:

ՕԿՍԻՆԱ. Զի կարելի. ինչպէս չես հասկանում,
 նորահարսներ եմ կանչում — փախլաւայ,
 նուշով հաց չդնեմ չե կարելի:
 ԻՍՈՅ. Տեսար ինչքան բան է. հաւատայ նու-
 շով հաց չլինի, ագռաւները սև կհագնեն:
 ՕԿՍԻՆԱ. Լաւ, էս թող. — յետոյ կմտնես Ֆետ-
 աերին 5 ֆ. լաւ, երկու նուշով պեչենի
 շինել կտաս: (Ամուսինը վեր է թոնում):
 ԻՍՈՅ. Սա էլի ինչի համար է: Թէ փախլա-
 ւայ, նուշով հաց ես գնում...

ՕԿՍԻՆԱ. Փախլաւան ջոկ աղաթ կանգի, նու-
 շով հացը և պեչենին միասին շարած՝ ջոկ:

ԻՍՈՅ. Ինչպէս թէ միասին շարած:

ՕԿՍԻՆԱ. (վրկովված). Դէ, հիմա սա աղամար-
 դու խառնվելու բան է, որ խառնված ես:
 Նուշով հացը և պեչենին միասին կսար-
 քենք մի մատուցարանի վրա, այսպէս՝ ա-
 ռաջ մի հատ նուշով հաց, յետոյ մի հատ
 պեչենի, յետոյ էլի նուշով հաց՝ էլի պե-
 չենի. Հասկացար: 12 ֆունտ էլ զանազան
 կտնիքետ է պէտք, 5 ֆունտ փուստաց, 4
 ֆունտ էլ քաղզի բարամ: Զէ, դու զը-
 լուխ չես հանիլ աւելի լաւ է փողը տուր,
 ես ինքս բոլորը կտնեմ: (Ամուսինը թող-
 նում է ականջ դնելը և գնում է, նստում է

սեղանի առաջ ու լըազիրը կարդում):
Քանի մաքիս է, Մաշա, ասեմ, էս լամպը
կդնես էս սենեակ. Էստեղի պատին կխփինք
երկու պատի լամպ. այս սեղանը կդնես քո
սենեակը, վրէն կդնես երկու մոմակալ: Յե-
տոյ պէտք է լաւ մտիկ անես, որ ողջով
լաւ վեր առնեն մօւռաբայից, տր եմիշեց.
մանաւանդ էն Անեօկին լաւ կնայես, նա
շատ քինթամազիցն է:

ՄՅՇԱ. Ինչ էք ասում, մայրիկ, չեմ իմանում:
ողջին լաւ կնայեմ:
ՕԿՍԻՆԱ. Լաւ, Հիմա գնանք մի րոպէ Լիզա-
յին, իսկ զնապներին կդանք՝ կգրենք:
(գնում են մեջ աեղեց):

ՏԵՍԻԼ Բ.

Ի Ս Ա Յ Ե Ա Կ Ո Ւ Լ Ի Զ.

ԻՄԱՅ (մէնակ, թողնելով կարդալը և հետե-
ներից ձեռքով արհամարհական շարժում
անելով). Փառք Ասածոյ գնացին. վլուխս
ճաքեց. Աստուած ազատի էս կնանիքից.
այ, խօսան հա, այ, տուան առան հա...

Մարդ երկաթի գլուխ պկաք է ունենայ,
որ սրանց հետ խօսել կարողանայ: Այ
հոգիներ, ոչինչ չեն հասկանում, ոչ մի
բան չեն ուղում լսել—թունդ իրենց էշն
են քշում՝ զօնազլուզ, նորահարս, աթոռ-
ներ—այ, զահրումար, հա... Ոչ առու-
տուր, ոչ մի օրինաւոր բան խելքներին չի
մտնում: Մի գան հարցնեն, թէ էսօր ես
ի՞նչ եմ արել, երկու մանեթ փող աշխա-
տել եմ, որ էս մառեաքան են սարքում:
Հենց ասում են՝ պէտք է անես, պէտք է
առնես՝ էլ չեն ասում թէ որաեղից: Քիչ
քիչ 40—50 մանեթի ծակ են բացում:
Էդ առաջինը չէ, ամեն ամիս մի բան հնա-
րում են: Այ, անցեալները կպել էին, որ
պէտք է ֆորտոպիան առնես—վլուխս ծա-
կեցին, էստեղ հասցրին (ցոյց է տալիս
կոկորզը): Վերջը ասացի Մակարիայից կը-
բերեմ, որ ձեռ քաշեցին: Հիմա էս նորա-
հարսներն են ցաւ գտուել: Զեն ասում, որ
մենք հասարակ դուքանդարներ ենք, մեզ
էդ բաները չեն սագիւ: Էս չօրս նորահարսն
էլ ինձ էժան չեն նստել չորսին էլ խո-
լաթ եմ տուել էգուց կլոր էլ էն՝ ինչ
է որ ասաց, Գայիւշ է, ի՞նչ ցաւ է, երե-

խայ կբերի, էլի կտօնու, որ ընծայ պէտք
է ուղարկել: Թէ ասա, ինչ որ կաշխառենք՝
խալաթի, ընծաների և զօնաղլուղների
վրա կը ծախսենք էլի... ը, ը, ը... (թափ
է առջիս ձեռքով): Ի՞նչ էլի... Հիմա եկեք
էս պահանջներին դիմացէք: Յետոյ ասում
են, որ հիմիկան աղերքը չեն պակվում.
շատ լու են անում: Էդ տեսակ կտնանց
ու աղջկերքի աչքը էդպէս էլ պէտք է
հանեն—թէ չ՝ շոր, շեապա, դօնողլուզ
ֆօրտօպիան—այ, ցան, հա՛... Էդ դնաղ-
լուզն էլ որ անում են, մի քեփն էլ քե-
փի նման լինի, ի՞նչ հոգս. • թէ չ՝ զալիս
են, մէկ-մէկու նայում են և պապանձած
Զաքարիայի նման բերան չեն բացում,
խօսք չեն խօսում: Էդպէս նստում են
մինչև զափայի ժամանակը առանց ձայն
ծպուտի: Հենց որ զափան խմեցին թէ չ՝
մին էլ տեսար՝ սագերի նման վիզները
բարձրացրին, զլուխները թափ տուին—
է՛հ, ինչ է եղել—լեզուներն է բացվել:
Նոր-նոր մէկ-մէկու առողջութիւն են հար-
ցնում... Էդ զակրումար զափան էլ կար-
ծես մեր զինին լինի: Հա՛, մոռացայ առելու,
գուք հալցըրէք թէ խօսքները ինչ է փլանի

կինը մարդու հեա չի հաշավում, ֆստանի
աղջեկը երկու տարի է միւնցն շնապա-
յով է ման գալիս, Ղազարի կնիկը հինգ
տարի է, որ վերևի բան չի կարել... (Կա-
նացի ձայնով) «Մալաշ, ուղի՞ղ է, որ Թա-
թուլենց հարսանիքին Միկուշի կնիկը
խալաթ չի առել... . Վայ, հողը զլիս,
(ձեռքը երիսին է առնում) նա տալօջ
աղջեկն է խօ... » (իր ձայնով) Էդպէս
ջուրը կծեծեն մինչև աղաթի ժամանակը:
Բայց հենց որ աղաթը վեր առան, ողջով
միասին վեր կկենան առն զնալու—Հիմա
տեսէք գուրս գալուց ի՞նչ խօսք, ի՞նչ
ձայն... . երկու ժամ էլ էստեղ կիսուն՝
կտան, կտոնեն—ապա թէ կինան: Թէ, ա-
սա՛, օրհնածներ, տանը նստած խօսէիք...
Է՛, (ձեռքով անում է արհամարհական
նշան դէպի ցած) տափը դնեմ ձեր պէս
կնանիքին... (սկսում է ման գալ): Զէ՛,
Էդ չեղաւ. պէտք է մի կերպ էդ զօնապ-
լուզն էլ չեռացնել, ինչպէս ֆօրտօպիանը
ցանեցի. . Բայց ի՞նչ հնար զնեմ... (մաս-
ծում է): Զէ, բան չի գուրս գալ չեն
հաւատալ: Հա՛, գտայ, գտայ—ես բան չիմ
գտնիլ, էս մինը զլուխս չի գովեմ—այ, ի՞նչ

զայենց տանը գրեցի, որ էս իրիկուն էնա
էդ բանը վերջացնենք... — Էլ էգուցվան
չմնայ: Այ, իսայ Եակուլիչ տե՛ս ու մերին
ենք կանչելու... Մաշա, կարդա: —
ՄՈ.Շ.Ա. (կարդում է). Նիկողոսենցից՝ Յ Հոգի,
Ովաննայենցից՝ Յ:

ՕԿՍԻՆԱ. Լիզայենց, Մաշա, չե՞ս գրել...
ԻՍՈ.Յ (կողմը). Ը, քո Լիզայիդ հերը անիծած...
ՄՈ.Շ.Ա. Ինչպէս չէ, գրել եմ. Լիզայենցից՝ Յ
Հոգի, Սահակ ապիլյանցից՝ Յ Հոգի, Սե-
նիւշենցից՝ Յ...

ԻՍՈ.Յ. Սպասիր, գու էդ ասա, էդ զօնաղնե-
րիդ մի երկու շաբաթ յետոյ չե՞ս կարող
կանչես:

ՕԿՍԻՆԱ. Խելքդ վրադ է, պատրաստութիւն-

ները տեսել եմ, ասում ես՝ թաղնեմ:

ԻՍՈ.Յ. Ի՞նչ պատրաստութիւն ես տեսել գեռ-
ոչինչ չի արած:

ՕԿՍԻՆԱ. Դու կարծում ես միայն քո բազա-
րիդ բանն է, երանի չեր լինիր:

ԻՍՈ.Յ (ընդհատելով). Քեզ ասում եմ թող-
նեմ՝ լաւ կանես...

ՕԿՍԻՆԱ. Ես քեզ ասացի չկ կարելի — մի երկու-
շաբաթից Գայիւշը երեխայ կրերի, չկ գալ —
յետոյ պէտք է երկրորդ անդամ՝ կանչեմ...

կանեմ — սուտան կհիւանդանամ, սրանից
լաւ հնար չկայ, բայց կարծեմ գալիս են...
հստեմ... (կարդում է):

ՏԵՍԻԼ Թ.

ԻՍԱՅ ԵԱԿՈՒԼԻՉ, ՕԿՍԻՆԱ ԲՈՂԴԱՆՈՎՆԱ և ՍՍԵՍ.

ՕԿՍԻՆԱ. (գալիս է մեջ տեղի դռնից, Մաշայի
շետ). Ինչքան բանս եմ թողել որ գամ
քեզ ասեմ...

ԻՍՈ.Յ (ընդհատում է). Էզպէս անժամանակ
էլի ի՞նչ բան:

ՕԿՍԻՆԱ. Ինչ է որ, նոր 9-է խփել մենք էս
իրիկուն Մաշայի շետ մինչեւ 12-ը բան
պէտք է անենք: Ասում ես — մի բանը վեր-
ջացնում ես, մի ուրիշն է բացվում: Էս
ջոպէ Լիզան ասաց, որ Վարեօկը հիմա
փախլաւայ չի շինում, այլ հիմա շատ լաւ
փախլաւայ է շինում: Ինչպէս է նա, Մա-
շա...

ՄՈ.Շ.Ա.. Աշուղենց հարսր:

ՕԿՍԻՆԱ. Հա, հա, գու էգուց կղնաս նրա մօա:
Դանուշին էլ կանչեցի, զօնաղներին էլ կի-

ԻՍՈՅ. (զարմացած). Սպասի՛ր, չհասկացայ,
ի՞նչ ես ասում, եթէ Գայիւշը չեկաւ,
պէտք է էլի կանչես:

ՕԿՍԻՆԱ. Դէ, գլուխ չունեմ, կարծես չես իմա-
նում մեր աղաթները, որ էլի հարցնում
ես—'ի հարկէ, եթէ չեկաւ, պէտք է դնեմ
էլի կանչեմ...

ԻՍՈՅ. (սկսում է տկարանալ). Օյ, օյ, օյ...
ՕԿՍԻՆԱ. } (Խիստ վախեցած). Ի՞նչ եղաւ, ի՞նչ
ՄԱՇԱ. եղաւ...

ԻՍՈՅ. Օյ, շուտով բժիշկ, բժիշկ...

ՕԿՍԻՆԱ. Մաշա, զնա, տես, եթէ աղախինը
եկել է, բժշկի ուղարկիր...

ԻՍՈՅ. Կողքս, մէջքս, գլուխս... (Մաշան զը-
նում է):

ՕԿՍԻՆԱ. Իսայ Եակուլիչ, մի վախեցիր, ես բո-
պէ բժիշկ կրերեմ:

ԻՍՈՅ. Ես չեմ վախում, բայց քեզ եմ խնա-
յում... օխ, մէջքս... Ես ի՞նչ հակառակ
ժամանակի պատահեցաւ... Նորահարսնե-
րիդ ի՞նչ կանես...

ՕԿՍԻՆԱ. Ոչի՞նչ ոչի՞նչ նորահարսներին միշտ
կարելի է կանչել— դու միայն առողջա-
ցիր:

ԻՍՈՅ. (անքելով). Զէ, կանչեր, կանչելո, ոչի՞նչ
ես կգնամ կպառկեմ... օյ, սիրու...
ՕԿՍԻՆԱ. Ինչ ես ասում, իսայ Եակուլիչ մին-
չեւ չլաւանաս չեմ կանչել:
ՄԱՇԱ. (ներս գալով). Աղախինը չի եկել մայ-
րիկ, զնացի Լիզային, որ ասեմ իր աղախ-
նուն ուղարկէ՝ նա էլ զնացել է Թանու-
շի ետևից, դեռ չի եկել:

ԻՍՈՅ. Շուտով տեղերս պատրաստէք: (Մայր
ու աղջիկ վեր են առնում երկու կողքեց
և տանում են միւս սենեակ, յիտոյ Օկ-
սինա Բօղդանովնան խսկոյն դուրս է դա-
լս վըան շալ գցած և ուղում է զնալ
բժիշկ Հրաւիրելու—այդ միջոցին գալիս է
Թանուշը):

ՕԿՍԻՆԱ. (Տեսնելով Դանուշին). Գնա, զնա,
եկող շաբաթ կդաս, մարդս հիւանդացել
է, զնատղուզ մնաց, յետ ընկառ... (Դա-
նուշը զարմացած մնում է բեմի վրա, Օկ-
սինա Բօղդանովնան շտապով դուրս է
զնում):

Վ Ա Ր Ա Գ Ո Յ Բ Ռ.

ԹԵԿԻԵԶԻՑ:

Բեմի վրա՝ գրասեղան իր պարագաներով,
պատի վրա՝ պատկեր:

Գործող անձանց՝ իսպ Եակուլիչին—բանա-
լիք տոպրակի մէջ փաթաթած, ձեռնափայտ,
լրագիր, խալաթ, կապոյտ ակնոցներ, Մաշտ-
յին—մի թերթ սպիտակ թուղթ, մատիտ, գիրք,
Օկոինս Բօղդանովսյին—շալ:



ԳՐԱՆ Է 20 ԿԱՊԻԿ.

489

0014646

2013

ՀՀ Ազգային գրադարան



NL0014646

